

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն թուականի Յունիսի 12—15 օրերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարուեց Խաղաղութեան Քրիստոնէական Կոնֆերանսի «Մերձաւոր Արեւելք» ենթա-յանձնաժողովի տարեկան նստաշրջանը, որին մասնակցում էին Չեխոսլովակիայից, Յորդանանից, Ռումինիայից, Արևմտեան Գերմանիայից, Յունաստանից, Թունիսից, Ռուսաստանից, Արևելեան Գերմանիայից, Միացեալ Նահանգներից, Լեհաստանից և Բուլղարիայից ժամանած տարբեր Եկեղեցիների շուրջ երեսուն հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ:

Նստաշրջանին իրենց մասնակցութիւնն էին բերում Խաղաղութեան Քրիստոնէական Կոնֆերանսի փոխ-նախագահ դոկտ. Գերհարդ Բասարակը և ԽՔԿ-ի Պրագայի կենտրոնում Ռուս Եկեղեցու մշտական ներկայացուցիչ հայր Գէորգի Գոնչարովը:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էր նաև Հայց. Առաքելական Եկեղեցին իր ներկայացուցիչներով:

Ժողովի նշանաբանն էր՝ «Արդարութիւն պաղեստինցի ժողովրդին»:

Նստաշրջանի բացումը կատարեց Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը աղօթքով և ողջոյնի խօսքով:

Ժողովի երեք օրերի ընթացքում մասնակիցները գործարար և համերաշխ մթնոլորտում քննարկեցին Մերձաւոր Արևելքի կրօնական, քաղաքական, տնտեսական և հասարակական կեանքի իրավիճակը՝ հաստատելով Մերձաւոր Արևելքի տագնապի շուտափոյթ լուծման անհրաժեշտութիւնը խաղաղ ճանապարհով:

Ժողովի նիստերին նախագահեց և Մերձաւոր Արևելքի հարցերին նուիրուած զեկուցումով հանդէս եկաւ Մայր Աթոռի դիւանապետ Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պոզապալեանը:

Յունիսի 14-ին, կիրակի օրը, ժողովականները Մայր տաճարում ներկայ եղան ս. պատարագի արարողութեանը: Նոյն օրը յետ միջօրէին նրանք այցելեցին Ս. Գեղարդի վանք և ապա Սևանայ լիճ:

Յունիսի 15-ին, նստաշրջանի աւարտին, ժողովի մասնակիցներն ընդունեցին երկու փաստաթուղթ.

ա. Հաղորդագրութիւն, որ բովանդակում է ժողովի ընթացքը և արծարծուած խնդիրները.

բ. Խաղաղութեան Քրիստոնէական Կոնֆերանսի Գործադիր Կոմիտէին յղուած Մերձաւոր Արևելքի տագնապի լուծմանը՝ վերաբերող 6 կէտերից բաղկացած յանձնարարականներ, որոնցից մէկը վերաբերում է Հայկական Ցեղասպանութեանը:

Յունիսի 15-ին, երեկոյեան, Երևանի «Արմենիա» հիւրանոցում, Հայկ. ՍՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը նստաշրջանի մասնակիցների պատուին կազմակերպեց պաշտօնական ճաշկերոյթ:

Ճաշկերոյթին ներկայ էին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Տիար Ստեփան Վարդանեանը՝ իր տեղակալներով, Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի եպիսկոպոսաց դասը և ժողովի բոլոր մասնակիցները:

Յունիսի 16-ին մեծարգոյ ժողովականները հրաժեշտ տուեցին Վեհափառ Հայրապետին և մեկնեցին Մայր Աթոռից լաւագոյն տպաւորութիւններով:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
18 Յունիս 1987 թ.